ՆՈՆԱ ԴԱՎԹՅԱՆ
Արցախի պետական համալսարանի
գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր. ժանր, ինքնակենսագրություն, հուշապատում, տարեգրություն, կարոտ, վերհուշ, եռագրություն, ինքնություն, ուխտավոր, բնօրրան:

Ключевые слова: жанр, автобиография, мемуары, хроника, тоска, воспоминание, трилогия, идентичность, паломник, колыбель.

Key words: genre, autobiography, memoirs, chronicle, melancholy, remembrance, trilogy, identity, pilgrim, cradle.

Ժանր հասկացությունը լայն իմաստ ունի և վերաբերում է ոչ միայն գրականությանը, այլ նաև արվեստի մյուս ճյուղերին: Դեռևս տասնութերորդ դարում գերմանացի փիլիսոփա, տեսաբան Հեգելը շեշտել է այն միտքը, որ ժանրեր ունի միայն գրականությունը: Հեգելից շատ չհեռանալով, ավելի ուշ՝ քսաներորդ դարում, ռուս գրականագետ, փիլիսոփա Մ. Բախտինը «էպոս և վեպ» (“Эпос и роман”) ուսումնասիրության մեջ գտնում է, որ գրականության մեջ գլխավոր հերոսները ժանրերն են, իսկ երկրորդական և երրորդական հերոսներ են ուղղություններն ու դպրոցները:

«Ինչպե՞ս դասակարգել ժանրերը» հարցին քննական ամենատարբեր մոտեցումներով փորձել են պատասխանել շատ գրականագետներ: Նրանցից խորհրդային գրականագետ Բ. Տոմաշևսկին գրում է. «Ժանրերի ոչ մի տրամաբանական և կայուն դասակարգում կատարել հնարավոր չէ: Դրանց դասակարգումը պայմանավորված է պատմական ժամանակով, արդարացված է միայն տվյալ պատմական պահի համար... »[1]:

Հայրենի տեսաբան Էդ. Ջրբաշյանը տալիս է «ժանր»-ի հետևյալ սահմանումը. «Ժանրերը գրական երկերի ընդհանուր տիպեր են, որոնք աչքի են ընկնում բովանդակության և ձևի որոշ կայուն հատկանիշներով»[2] և գտնում, որ ժանրերի սահմանազատման և բնութագրման համար կարելի է առանձնացնել երեք չափանիշ. դրանք են՝ **թեմատիկ**

---

[1] **Томашевский Б.,** Теория литературы. Поэтика., М.-Л., 1928, с. 162.

[2] **Ջրբաշյան Էդ.**, Գրականագիտության ներածություն/ Բանարվեստի հիմունքներ, Եր., 1996, էջ 267:

առանձնահատկությունները, գեղարվեստական պատկերի ստեղծման սկզբունքները, կառուցվածքի ընդհանուր առանձնահատկությունները:

Անցյալ դարավերջին գերմանացի փիլիսոփա և գրականության պատմաբան Կետե Համբուրգերն առանձնացնում է երկու սեռ՝ **լիրիկական** (որի մեջ տեղավորում է քնարական երկերը, ինքնակենսագրական վեպը, հուշապատումը, ուղեգրությունը, ընդհանրապես այն երկերը, որտեղ ներկա է հեղինակը, իսկ պատումը տարվում է առաջին դեմքով) և **ստեղծագործական**, այսինքն՝ հորինված (որտեղ նա ներառում է էպոսը, ողբերգությունը, կատակերգությունը, բալլադը):

Ռընե Ռելլեքի և Օսթին Ուորրենի «Գրականության տեսություն» աշխատության մեջ ժանրը ձևակերպվում է այսպես. «Կարծում ենք, որ ժանր կարելի է համարել այն գրական երկերի խմբավորումը, որը տեսականորեն հիմնված է ինչպես «արտաքին» (հատուկ չափ կամ կառուցվածք), այնպես էլ «ներքին» (վերաբերմունք, տոնայնություն, նպատակ, այլ կերպ ասած՝ թեմա և լսարան) ձևի վրա»[3]: Նույն գրականագետները նկատում են նաև, որ ժանրի ժամանակակից տեսությունը «...չի սահմանափակում հնարավոր ժանրերի թիվը և կանոններ չի պարտադրում հեղինակներին: Այն ընդունում է, որ ավանդական տեսակները կարող են «միախառնվել»՝ առաջ բերելով նոր տեսակ (ինչպես տրագիկոմեդին): Նա (ժանրի ժամանակակից տեսությունը- Ն. Դ.) տեսնում է, որ ժանրերը կարող են խարսխվել ոչ միայն «մաքրության», այլև փոխընդգրկման կամ «հարստացման» վրա (այսինքն ոչ միայն նվազման, այլև սերտաճման վրա)»[4]: Կարևորվում է այն միտքը, որ ինչքան էլ «գրականությունը հարաբերություն ունենա այլ ոլորտների հետ», այնուամենայնիվ գրական երկերը կրում են ազդեցություններ. «գրքերը նմանակում, ծաղրանմանակում են այլ գրքեր, փոխակերպում դրանք», ուստի, նկատում են Ռ. Ռելլեքն ու Օ. Ուորրենը. «Ժանանակակից ժանրերը սահմանելու համար հավանաբար ավելի լավ է սկսել մի ինքնատիպ, լայն ազդեցություն ունեցող գրքից կամ հեղինակից և որոնել անդրադարձումները»[5]:

Այս առումով հայրենի տեսաբան Ա. Ջրբաշյանը նկատում է. «...ակնհայտ իրողություն է, որ ժանրերից շատերը հաճախ չեն կրում որևէ սեռի մաքուր հատկանիշներ, այլ հանդես են գալիս իբրև միջանկյալ ձևեր: Հետևաբար, առաջանում են լրացուցիչ խնդիրներ, թե տվյալ ժանրը որ սեռի

---

[3] **Ռելլեք Ռ.**, **Ուորրեն Օ.**, Գրականության տեսություն, Եր., 2008, էջ 344:

[4] Նույն տեղում, էջ 349:

[5] Նույն տեղում, էջ 350:

շրջանակներում պետք է ներկայացնել, կամ արդյոք այն անպայմանորեն պետք է հատկացնել որևէ սեռի»[6]:

Մեր խնդիրն այս դեպքում ինքնակենսագրության ժանրն է, որը ժամանակակից գրականագիտության մեջ հանդես է գալիս տարբեր անվանումներով՝ կենսապատում, ինքնակենսագրություն, հուշապատում, գեղարվեստական տարեգրություն և այլն, իսկ որոշ տեսաբանների մոտ նաև «վավերագրություն», «հուշի գրականություն» ձևակերպումներով: Ինչ անվանում էլ տալու լինեն գրականագետները, նկատում է ռուս տեսաբան Յու. Սապոժնիկովան, «...բացահայտելով երկերի հիմնական հատկանիշները՝ նրանք (տեսաբանները- Ն. Դ.) բոլոր դեպքերում գալիս են մեկ հետևության. Այն (ինքնակենսագրական ժանրը-Ն. Դ.) պատկանում է հուշի գրականությանը»[7]:

Ֆրանսիացի գրականագետ Ն. Լեժիոնը տալիս է հետևյալ բացատրությունը. այն «...իրական մարդու ռետրոսպեկտիվ (հետահայաց) արձակ պատմությունն է, ով պատմում է իր գոյության մասին՝ կարևոր շեշտադրում կատարելով անձնական պատմության վրա»[8]:

Զարգացնելով միտքը՝ Ն. Լեժիոնը մեկ այլ հոդվածում նկատում է. «Հեղինակային «ես»-ը կամ կերպարի «նա»-ն այդ դեպքում հանդես է գալիս փոխաբերական իմաստով, ընթերցողի «ես»-ի փոխարեն՝ հնարավորություն տալով նրան մտովի ընդհանրանալու «հերոս-հեղինակ»-ի հետ»[9]:

Է. Զադոյանը, շատ չհեռանալով ռուս և ֆրանսիացի գրականագետների տեսական մտքից, առանձնացնում է հուշագրության հինգ ժանր՝ նշելով, որ «ամենաերիտասարդ և ամենաքիչ կայացածը» ինքնակենսագրության ժանրն է, որի «հիմնական պահանջն է ներթափանցել հեղինակի անձի հոգեբանության մեջ և որպես անհատականություն նրան ի ցույց դնել»[10]:

Գ. Մահարու և Վ. Թոթովենցի ինքնակենսագրական երկերի՝ Ս. Արզումանյանի գնահատություններում կարդում ենք. «Գեղարվեստական ստեղծագործությամբ հեղինակն ասում է ոչ միայն իր «անձնական

---

[6] «**Գրականության տեսության արդի խնդիրներ**» /ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 85:

[7]**Сапожникова Ю. Л.**, Жанр автобиографии: понятие и особенности. www.cyberleninka.ru կայքում:

[8] **Лежен Филипп**, В защиту автобиографии. эссе разных лет. Перевод и вступление Бориса Дубина, magazines.russ.ru/inostran/2000/4/lezhen.htm/:

[9] Նույն տեղում:

[10] «Կանթեղ» /գիտական հոդվածներ, 2-3(59-60), Եր., 2014, էջ 30:

ճշմարտությունը», այլև կյանքի, ոչ ավելի շատ իր «անձնական ճշմարտությունը», քան կյանքի»[11]:

Կենտրոնում հեղինակն ինքն է, բայց միևնույն ժամանակ «նյութը» ծավալվելով՝ «նախ վերաճ[ում է] մի գերդաստանի, ապա՝ ժողովրդի կյանքի պատմության»[12]: «Դա էպոխայի պատմությունն է, թափառական ու անտերունչ մի սերնդի կյանքի տարեգիրքը»[13],- ընդհանրացնում է Ս. Արզումանյանը:

Գրականագետ Ս. Դանիելյանը միտքը զարգացնում է հետևյալ ձևակերպումով. «Ինքնակենսագրական վէպի հերոս առաջադրուած հեղինակը իր մտորումներով, մեկնական գնահատութեան կարելիութեամբ ներազդում է գեղարուեստական միջվայրի վրայ որոշակիօրէն՝ անհամեմատ բարձրանալով շրջապատի միւս հերոսներից»[14]:

Այս ստեղծագործությունները կյանքն ապրած մարդու վերաքննություն-հաշվեհարդարն է: Բնութագրական է ինքնակենսագրական պատումի վարպետ Գ. Մահարու մոտեցումը. «Գրական երկի հաջողության պայմանն է, որ տվյալ նյութը ոչ միայն քաջածանոթ լինի գրողին, այլև **ապրված** (ընդգծումը հեղինակինն է- Ն. Դ.): Առանց այս նախապայմանի անխուսափելի է պարտությունը...»[15]:

Ինչո՞ւ և ո՞րն է պատճառը, որ արձակագիրներն առանձնապես ինքնակենսագրական ժանրի տիրույթներում են փորձում գտնել իրենց: Ավելին՝ Վահե Օշականի կարծիքով «...արդի գրականութիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր կեանքի զգայնութեան պատճէնը»[16]:

Մեր դիտարկումով, սա առավել բնութագրում է Կարոտի երգիչներին, որոնք սերելով «յուշի կարեւորման պահանջից»՝ «ենթագիտակցօրէն, մասունքների կորստեան վախից մղւում [են] արթնացնելու սրբացած յիշատակներ»[17]:

«Ինձ մնում է փրկել մնացածն ու հնարավորը,- գրում է Գ. Մահարին:- Հիշել եմ ուզում, վերհիշել և գրել, գրել անմշուշ, պայծա՛ռ, պայծա՛ռ այն

---

[11] **Արզումանյան Ս.**, Սովետահայ վեպը, Եր., 1967, էջ 331:
[12] Նույն տեղում, էջ 332:
[13] Նույն տեղում, էջ 335:
[14] **Դանիէլեան Ս.**, Սփիւռքահայ վէպը, Գիրք Ա/ Ժանրը, աւանդոյթները, պատմութեան փիլիսոփայութիւնը, Անթիլիաս, 1992, էջ 192:
[15] **Մահարի Գ.**, Այրվող այգեստաններ, Եր., 2004, էջ 556-557:
[16] «Բագին», Պէյրութ, 1962, թիւ 1, էջ 11:
[17] **Դանիէլեան Ս.**, Սփիւռքահայ վէպը..., էջ 189:

քաղաքի երկնքի նման, ծովի կապույտի նման, այգեստանների կանաչի ու լուսնկա գիշերների խորության նման: Գրել»[18]:

Գ. Մահարին հյուսեց Վանի ասքը նախ «Մանկության» մեջ, ապա նաև կենսապատումի հաջորդ էջերում և «Այրվող այգեստաններ»-ում: Բառագունային ինքնեկ պատկերներով հայրենի հիշատակները փրկագործելու նպատակամղումով Վ. Թոթովենցը ուրվագծեց Մեզիրեն՝ գրելով «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ասքը, որտեղ նահապետական հայ ընտանիքի և ընդհանրապես մի ամբողջ գյուղաքաղաքի նիստուկացի նկարագրությունն է[19]: Ծննդավայրի ու «ոսկեհյուս» մանկության կորստի ցավը, հարազատների խեղված ճակատագրերը, վերագտնումի ազնիվ ճիգերը գրողին կանգնեցնում են նման հանձնառության առջև: Եվ նա տարեգրում է ժամանակը, վավերագրում իր ու իր նման հարյուրավորների կյանքը՝ փորձելով փրկել անցյալի հիշատակները, այն, ինչ երազային «կապույտ թռչունի» թևերին հետզհետե կորավ մշուշներում: Եվ այդ «...վկայություններն ապագայում ավելի արժեքավոր են լինելու, քան պատմագիրների փաստերը, որովհետև այդ փաստերի հետևում չի երևում մարդը, այլ միայն մարդկությունը[20]»,- նկատում է Ժ. Քալանթարյանը:

Սփյուռքի գրական անդաստանում ժանրի նվաճումները պատկանում են Համաստեղին, Հ. Մնձուրուն, Ա. Հայկազին, Վ. Հայկին, Բ. Նուրիկյանին, Ա. Ծառուկյանին, ավելի ուշ Պ. Հաճյանին և ուրիշներին:

Համաստեղը դարձավ Կարոտի գրականության առաջնորդը. նրա համար միակ հիշատակելին այլևս անցելասույզ Խարբերդն էր ու խարբերդցին: Թե՛ փոքր կտավի, թե՛ լայնակտավ վեպերում հաճախ հերոսը նույնանում է հեղինակի հետ, ով տարիների հեռավորությունից գրչով անմահացնում է իր ապրած միջավայրը, դեմքեր, հիշատակներ, որոնք թանկ են իր համար:

Այսպես «Հայրենի ծխանի» (այսպես են կոչվում Վ. Հայկի պատումնաշարերը) ցավի արձագանքն է Վահե Հայկի արձակը: Նրա համար, ինչպես Համաստեղի պարագայում, գավառը մնում է գերիվեր, հեքիաթային, անմեկնելի կախարդանք ունի իր ծննդավայրը: Եվ հիշողության գույներով հեղինակը վրձնում է հին գյուղի հիշատակները՝ ինքնօրինակ գունայնությամբ առանձնացնելով հոր կերպարը: Հողմաշունչ

---

[18] **Մահարի Գ.**, Երկերի ժողովածու, հատոր երկրորդ, Եր., 1967, էջ 7:

[19] Ինքնակենսագրական ժանրի ծիրում են նաև Ս. Զորյանի «Մի կյանքի պատմություն», Ն. Զարյանի «Երկրորդ կյանք» վեպերը:

[20] «Գրական թերթ», Եր., մայիս 18, 2014:

օրերը քշել-տարել են ամեն ինչ, «...հիմա լքված է ան, մեր այգին, ինչպես բոլոր այգիները...»[21],- ցավով արձանագրում է հեղինակը:

Բ. Նուրիկյանը ևս ուրվագծեց անցյալը՝ հայրենի տան կարոտի կրակը բորբոք պահելու, վերադարձի, պահանջատիրության հույսով սերունդներին զինավառելու փափագ ունեցողի նվիրումով: «Այգեկութք» (1937), «Պանդուխտ հոգիներ» (1958), «Կարոտ հայրենի» (1978) շարքերում Բ. Նուրիկյանը պարզ, մտերմիկ ոճով, մեկ-երկու էջի մեջ դրեց «աղն ու պղպեղը» գավառի, ստեղծեց իր գույների ու մեղեդիների աշխարհը, հյուսեց իր ծննդավայրի գունեղ հեքիաթը: Նա «անցյալի խորունկ հոր»-ից դուրս հանեց հին գյուղի միօրինակ կյանքի տարիները և գեղջուկի պես քունքերը տրորեց՝ ասես «մոռացված դեմք մը հիշելու ճիգով»: Մեր տեսադաշտում ամբողջ հասակով կանգնում են մայրը, ով «աղոթքի վերջին փշուրը դեռ բերանը» բանում էր անընդհատ, ողբում զավակների պանդխտության համար, հայրը, ով ամեն մեռելոցի համիդյան ջարդերին զոհ գնացած պապի գերեզմանն էր տանում: Անցնում են տարիներ, հեղինակի «մտրակված կարոտը» հին օրերին է վերադառնում. «Ըսե՛, հա՛յր, բահս ո՞ւր զարնեմ այս անգամ, և ո՞ւր տնկեմ թութի մատղաշ չթիլ մը, որուն շուքը քու և մորս մասունքին վրա իյնա»[22]:

Եվ Բ. Նուրիկյանը վրձնում է «անտուն, անտիրական ցեղի մը մանրանկար ողբերգությունը»՝ գեղարվեստորեն տարեգրելով նաև կորուստներով լի իր կյանքը:

Հիսունական թվականներն, ահավասիկ, ինքնակենսագրավեպի վերելքի տարիներ էին: Այդ վերելքը պայմանավորող արձակագիրներից էր Ա. Ծառուկյանը: 1955-ին Բեյրութում հրատարակվում է «Մանկություն չունեցող մարդիկ» վիպակը, ուր արձակագիրը հյուսում է որբության դատապարտված սերնդի՝ զրկանքներով լի, դաժան ու բիրտ կյանքը, ուր «հարկ էր ապրիլ ու մեծնալ, քալել անընդհատ, բայց միշտ զգույշ և ուշադիր»[23],- գրում է արձակագիրը:

Կորցրած մանկության արահետներով քայլող Ա. Ծառուկյանը վաղ պատանեկության հեքիաթն է հյուսում ավելի ուշ՝ 70-ականների երկրորդ կեսին՝ ընթերցողի դատին հանձնելով «Երազային Հալեպը» վիպակը: Հեղինակն այստեղ այլևս որբ չէ, նա մոր հետ տեղափոխվում է Բեյրութ, կատարում գրական առաջին քայլերը, աշխատակցում «Ազդակ»

---

[21] **Վահէ Հ.**, Հայրենի ծխան, Եր., 1960, էջ 334:

[22] **Նուրիկյան Բ.**, Պանդուխտ հոգիներ, Եր., 1958, էջ 71:

[23] **Ծառուկյան Ա.**, Մանկություն չունեցող մարդիկ, Երազային Հալեպը, Եր., 1985, էջ 191:Մնձուրի Հ., Երկեր, Եր., 1986, էջ 219:

պարբերաթերթին, աշակերտում Լ. Շանթին, Ն. Աղբալյանին: Բայց հոգում որպես երազ մնացել էր երազային Հալեպը (մեր օրերում արյունաթոր Հալեպը), նրա փողոցներն ու տները, պարտեզներն ու «անոնց մեջ եռացող [իր] խենթ ու խելառ պատանության[ս] դրվագները», մնացել էին «անոնց պատճենները, ***անաղարտ ալպոմի մը պես...***»[24] (ընդգծումը մերն է- Ն. Դ.):

Ամերիկահայ արձակում վաթսունականներին ինքնակենսագրության ժանրի նվաճումները կապվում են Հ. Ասատուրյանի անվան հետ: 1965-ին Հ. Ասատուրյանը սեղանին է դնում հայրենի Չոմախլուի, իր շեն գերդաստանի հիշատակները սրբագրող գիրքը՝ «Հովակիմի թոռները» վեպը: Գիրքը հրատարակվում է Բեյրութում, ավելի ուշ՝ 1974-ին Երևանում, որին որպես տրամաբանական շարունակություն հետևում են «Հովակիմի թոռնորդիները» (1982, Բեյրութ) և «Տo, լա՛ճ տնավեր» (1986, Բեյրութ) վեպերը: Եռագրության առաջին մասում գրողի մանկության հուշն է. Չոմախլու գյուղում «օր ու օրացույց չունեցող» Հովակիմի գերդաստանն էր ապրում, ապա կորագծվում է գյուղին «ճի՛շտ իր պորտին պես, հարազատ կապերով ամո՛ւր կապված» մարդկանց կյանքը: Ասելիքը արձակագիրը տարբեր ոճային երանգներով է վերարտադրում. Մե՛րթ պատմելով առաջին դեմքով, մե՛րթ նկարագրելով, իսկ խոսքի մեջ իշխող է պարզությունն ու մտերմիկ շնչառությունը: Եռագրության երկրորդ և երրորդ մասերում հերոսը անվանափոխվում է (Հարություն-Լևոն-Տիգրան), բայց նրանք նույն Հովակիմի, այսինքն հայի սերունդն են, այլևս «օրինյալ գաղութի» (Ա. Արփիարյան) բնակիչներ, ովքեր դարձյալ «կռիվ» ունեն՝ այս անգամ ինքնության պահպանման համար:

Սփյուռքահայ գրականության մեջ ինքնակենսագրական ժանրի նվաճումները կապվում են նաև Կարոտի գրականության մեկ այլ ներկայացուցչի՝ Պոլսում այդ գրականության դրոշները պարզած Հ. Մնձուրու անվան հետ: «Կապույտ լույս» (1958) և «Արմտան» (1966) ժողովածուներում Հ. Մնձուրին ևս կենդանի, շարժուն պատկերներով գրականություն բերեց իր հայրենի գյուղը՝ «դաշտային պահակի ճշգրտությամբ» (ըստ Հրանտ Մաթևոսյանի): Նրա ստեղծագործություններում ինքնակենսագրական պատումը երբեմն նույնանում է գեղարվեստական պատկերի հետ, ինչպես օրինակ «Կավին դարը» պատմվածքում. «Այս պատմածներս,- խոստովանում է Հ. Մնձուրին,- պատմվածք շինելու համար ստեղծագործություն մը չէ: Կավին Դարը հողին տակը մնացողը՝ Տեմուրճենց հարսը, իմ մայրս է: Ինձմով իր վերջին

[24] **Մնձուրի Հ.**, Երկեր, Եր., 1986, էջ 219:

ամսվան մեջ հղի եղեր էր: Դեպքեն քսանըհինգ օր վերջը ես աշխարհ եկեր եմ: *Բառ առ բառ՝ իմ պատմությունս է առ*[25]» (ընդգծումը մերն է –Ն. Դ.):

Կարոտի գրականության ու ինքնակենսագրության ժանրում, անշուշտ, պետք է դիտարկել նաև Վ. Շուշանյանի ստեղծագործությունները, ում համար նույնպես հիշատակը գերիշխող է: «Սփյուռքահայ գրականության մեջ թերևս չկա մի հեղինակ, որի ստեղծագործությունն այդքան ինքնակենսագրական լինի, ինչպես Վազգեն Շուշանյանինն է»[26],- նկատում է գրականագետ Ա. Թոփչյանը:

Վ. Շուշանյանի կարոտի սլաքի ուղղությունը ծովեզերյա քաղաք Ռոդոսթոն է, որի հեքիաթը ինքնօրինակ խաղերով է մանում «Օրերը գեղեցիկ չեն» (1929), «Ճերմակ Վարսենիկ» (1934), «Մթին պատանություն» (1940), «Սիրո և արկածի տղաքը» (1957) վեպերում, ինչպես նաև «Երկիր հիշատակաց» (1927) պոեմում: Նշված երկերում հեղինակը պահպանում է նաև ժողովրդախոսակցական լեզվի տարրերը, ինչի մասին խոստովանում է «Ճերմակ Վարսենիկ» վեպի առաջաբանում. «Ջանացած եմ նաեւ խօսակցութեանց մէջ հաւատարիմ մնալ՝ մեր շրջանին մէջ գործածական լեզուին»[27]:

Ինքնակենսագրական հուշապատումին ավելի ուշ վերադառնում է բանաստեղծական ժողովածուներով իրեն հաստատած Մուշեղ Իշխանը՝ մեկնելով «միթե լավագոյն պատմութիւնը, դուք ըսեք՝ վէպը յուրաքանչյուր անձի կյանքը չէ՞ արդեն» սկզբունքից:

«Հացի եւ լոյսի համար» (1951), «Հացի եւ սիրոյ համար» (1956), «Մնաս բարով, մանկութիւն» (1974) եռագրության մեջ հեղինակը բերում է աքսորի ճանապարհներին, տաժանակրության բավիղներում հասակ նետած սերնդի նկարագիրը, պայքարը հացի, լույսի, սիրո համար. «Եւ ահաւորը այն էր,- գրում է Մ. Իշխանը,- որ ինք (Սեդրակ-Ն. Դ.) ստիպուած էր ահա ականատես յուղարկաւորը ըլլալու իր մեռած մանկութեան եւ նրբազարթ երազներուն...»[28]:

Ժանրի ծիրում է նաև Արամ Հայկազի «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» (1972) վեպը: Գլխավոր հերոսը՝ Մյուսլիմ-Արամը, հեղինակն ինքն է: Շապին-Գարահիսարի հերոսամարտի տխուր ավարտից հետո շատ

---

[25] **Թոփչյան Ալ.**, Ապագայի ներկայությամբ, Եր., 1987, էջ 196:

[26] **Շուշանեան Վ.**, Ճերմակ Վարսենիկ, Պէյրութ, 1960 (տե՛ս՝ հեղինակի ձեռագիրը վէպի մասին, Նըմուր, 1934):

[27] **Իշխան Մ.**, Մնաս բարով, մանկութիւն, Պէյրութ, 1974, էջ 6:

[28] **Նույնը**, Հացի եւ լոյսի համար, Պէյրութ, 1951, էջ 18:

ընտանիքների հետ Արամը, մայրը և եղբայրը՝ Հայկազը, բռնում են տարագրության ուղին: Ճանապարհին գնդակահարում են եղբորը, մայրը հորդորում է Արամին կրոնափոխ լինել՝ փրկվելու համար: Կորցնում է նաև մորը: Չորս տարի, այլևս Մյուսլիմ, Արամը ապրում է քրդերի մեջ և միայն 1919–ին փախչում լեռներից, անցնում Սեբաստիա, ապա՝ Պոլիս:

Երկարամյա հրապարակային, մանկավարժական գործունեությունից հետո գրականություն վերադարձած արգենտինահայ արձակագիր Պ. Հաճյանը կյանքի վերջին տասնամյակում ընթերցողի դատին է հանձնում իր կենսագրավեպը՝ «Կարկեմիշը» (2005): Պ. Հաճյանի կարոտի ուղղությունը պատմական հայրենիքի և Սիրիայի սահմանին ծվարած Կարկեմիշն է, ուր տեղահանությունից հետո հաստատվել էին ծնողները: Եվ սա է պատճառը, որ Պ. Հաճյանի վեպում կարոտը երկու ուղղություն ունի. դա գրողի կարոտն է հեռվում թողնված ծննդավայր Կարկեմիշի («կորսնցուցած եմ Արեւելքը...») և մնացորդաց, այդ թվում նաև հոր՝ սրճեփ Ավետիսի կարոտը էրգրի հիշատակների հանդեպ: Պ. Հաճյանը գրականություն է բերում անապատված ճակատագրեր, կորուստների ցավով ապրող մարդկանց՝ ավանդական-նկարագրական առանձնաձևերին զուգորդելով հոգեբանական արձակի հատկանիշները:

Կենսագրապատումը գրողի հոգու խճանկարն է, ով իր ապրած կյանքը թղթին է հանձնում առանձնակի ջերմությամբ ու պատասխանատվությամբ: Դա նրանց երազների ճանապարհն է: Եվ նրանց հետ ակամայից մենք էլ վերածվում ենք ուխտավորի, նրանց հետ լինում Վանում, Խարբերդում, Արմտանում, Չոմախլուում, Մեզիրեում, Արմաշում, Ռոդոսթոյում, հմայվում էրգրի իրական տերերի նիստուկացով, դառնում պատմական աղաղակող անարդարության վկան:

Ն. Դավթյան

Ինքնակենսագրության ժանրի արծարծումները սփյուռքահայ գրականության մեջ

Ամփոփում

Հոդվածում նախ անդրադարձ է կատարվում ինքնակենսագրության ժանրի համաշխարհային(Հեգել, Մ. Բախտին, Ռ. Ռելլեք, Օ. Ուորրեն, Ն. Լեժիոն) և հայրենի (Էդ. Ջրբաշյան, Ս. Արզումանյան, Է. Զադոյան) գրականագիտության տեսական ձևակերպումներին: Ինքնակենսագրական ժանրի նվաճումները հայ գրականության մեջ կապվում են Գ. Մահարու, Վ. Թոթովենցի, Ս. Զորյանի անվան հետ: Սփյուռքի գրական անդաստանում ժանրի նվաճումները պատկանում են Համաստեղին, Հ. Մնձուրուն, Ա. Հայկազին, Վ. Հայկին, Բ. Նուրիկյանին, Ա. Ծառուկյանին, ավելի ուշ Պ. Հաճյանին և ուրիշներին: Կենսագրապատումը արձակագրի հոգու

խճանկարն է. առանձնակի ջերմությամբ ու պատասխանատվությամբ նա տարեգրում է ժամանակը, վավերագրում իր ու իր նման հարյուրավորների կյանքը: Դա նաև նրանց երազների ճանապարհն է, ուխավորի պես վերադարձ Վան, Խարբերդ, Արմտան, Չոմախլու, Մեզիրե, Ռոդոսթո, մեկ խոսքով՝ երկիր Նաիրի:

Н. Давтян

РАЗВИТИЕ АВТОБИОГРАФИЧЕСКОГО ЖАНРА В ЛИТЕРАТУРЕ ДИАСПОРЫ

Резюме

В статье во-первых затрагиваются мировые (Гегель, М.Бахтин, Р.Уелки, О.Уоррен, Н. Лежион) и отечественные (Э. Джрбашян, С.Арзуманян, Э.Задоян) теоретические разработки литературоведения. Достижения в автобиографическом жанре армянской литературы связаны с именами Г.Маари, В.Тотовенца и С.Зоряна.

Литературные достижения диаспоры принадлежат Амасте, Мндзури, А.Айказу, В.Айку, Б.Нурикяну, А.Царукяну позже П.Ачяну и другим.

Автобиография является мозаикой души писателя: с особой теплотой и ответственностью он описывает время, свою жизнь и жизнь сотни людей, похожих на него.

Это также является дорогой их грез, возвращение как паломника в Ван, Харберд, Армтан, Чомахлу, Мезире, Родосто, одним словом в страну Наири.

N. Davtyan

THE DEVELOPMENT OF THE AUTOBIOGRAPHICAL GENRE IN THE LITERATURE OF DIASPORA

Summary

The article first touches upon the world (Hegel, M. Bakhtin, R. Yelki, O. Warren, N. Lezhion) and native (E. Jrbashyan, S. Arzumanyan, E. Zadoyan) theoretical developments of literary studies. Achievements in the autobiographical genre of Armenian literature are associated with the names of G. Maari, V. Totovents and S. Zoryan.

The literary achievements of the diaspora belong to Amastegh, Mndzuri, A. Aikaz, V.Haik, B.Nurikyan, A.Tsarukyan later to P.Hachyan and others.

Autobiography is a mosaic of the writer's soul: he describes the time, his life and the lives of hundreds of people like him with special warmth and responsibility.

It is also the road of their dreams, returning as a pilgrim to Van, Harberd, Armantan, Chomahlu, Mezire, Rodosto, in one word to the country of Nairi.